

ՄԿՐՏԻՉ ՎՐԴ. ԿԵՍՍՐԱՅԻ.—Մբ. 1800 ին ՏՅՊ. Կը վախճանի 1818 ին:

ՄԿՐՏԻՉ ՎՐԴ. ՂՐԻՄՅԻ Գ.—Մբ. Լսպ. Մկրտիչ արքեպս. ի ձեռնասունը, որ քսանեութ տարեկան կը վախճանի ու կը թաղուի Սիրոնի գերեզմանատունը. այս է իր տապանագիրը.

«Սա էր մանուկ հոգւով լցեալ,
որպէս ծաղիկ թառամեալ,
ի տապանին յայսմիկ եղեալ.
Կսկծալից զմեզ թողեալ:
էր վարք նորին զարմանալի.
ատենական բաբունի.
տէր Մկրտիչ անուն կոչի.
ամենեցուն իսկ փարեկի:
Ծնունդ սորին Հոնաց երկրի,
ազնիւ որդեակ Սրբազանի
յարգապատիւ լուսարարի,
Տեսուն Մկրտիչ Հերապետի,
նորաբողբոջ ի հասակի,
իրեւ ամաց քսանութի
վախճանեցաւ յօր հինգշարթի
ի ժամ երկրորդ երեկոյի.
Փրկչին մերոյ կենարարի,
յամս հազար ութ հարիւրի
քսան և ութ թուականի
ապրիլ ամսոյ տասն երեքի.
ՌՄՀԷ (= 1828) \ԴԷԿ»

ՄԿՐՏԻՉ ՎՐԴ. ՊԷՀԷՄԵՆՅԻ.—Մբ. 1717 ին. Ժամօրհնոյ. Ս. Յակոբի տուած իր յիշատակներու մասին (ՄՁ. Թ. 532):

ՄԿՐՏԻՉ ՎՐԴ. ՊՈԼՍԵՅԻ.—Մբ. 1802 ին, Ձոխանի:

ՄԿՐՏԻՉ ՎՐԴ. ՍՍՄԱԹԻԱՅԻ.—Մբ. կը վախճանի 1826 ին, Թերեւս նոյն է ընդ վերնոյն:

ՄԿՐՏԻՉ ՎՐԴ. ՏԵՐ ՄԱՐԳԱՐԵԱՆ, ԲԱՂԻՇԵՅԻ.—Մբ. Զ. 1889 ին. ՏԲ. (1898—1901). հիւրընկալ (1892—94). 1904 ին վախճին տանիքէն արկածի հետեւանքով վար իյնալով կը վախճանի: